ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Սուրեն Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հիմնաբառեր. *Հայաստանի Կարմիր խաչի ընկերություն, Հայրենական Մեծ պատերազմ, բժշկական և սանիտարական օգնություն, Կարմիր բանակ, առողջապահություն, մարդասիրական գործունեություն, բուժկետ:*

Հայաստանի Կարմիր խաչի ընկերությունը (այսուհետ՝ ՀԿԽԸ), չնայած 1920-ականներից ի վեր Հայաստանում իրականացրած սոցիալական նշանակության հսկայածավալ և կարևորագույն գործունեությանը[1], XX դ. 30-ական թթ. վերջ հասավ սպառված ներուժով, բազմապիսի ու բազմաշերտ խնդիրներով: Սակայն, վերջիններիս առկայության պայմաններում անգամ ընկերությանը հաջողվեց սոցիալական ու բուժասանիտարական հսկայածավալ գործունեություն իրականացնել ինչպես թիկունքում, այնպես էլ ռազմաճակատում, ինչը մեծ օգնություն էր Մեծ Հայրենականի տարիներին ժողովրդին պատուհասած փորձություններին դիմագրավելու ուղղությամբ:

1941 թ. հուլիսին պետական վերահսկողության ժողկոմ Ա. Բունիաթյանի՝ Կոմկուսի գլխավոր քարտուղարին և ժողկոմխորհի ներկայացուցչին ուղղված հաշվետվության մեջ որպես ՀԿԽԸ-ի գործունեությանը վերաբերող հիմնական խնդիրներ նշվում են բուժկետերի վերաբերյալ տեղեկատվության անկատարությունը և անհրաժեշտ դեղորայքով ու բուժտեխնիկայով հագեցվածության ոչ բավարար մակարդակը: Նշված բուժկետերի հիմնական գործառույթն էր ձեռնարկություններին, հիմնարկություններին, դպրոցներին, կոլտնտեսություններին և տներին անհրաժեշտ առաջին բուժօգնության տրամադրումը: Նախորդող 5-6 տարիներին հանրապետության տարածքում ձևավորվել էին 1517 բուժկետեր, որտեղ չէր իրականացվում կադրերի պատշաճ հաշվառում, ավելին՝ նույնիսկ չկար տեղեկատվություն բուժկետերի փաստացի գոյության մասին: 1517 բուժկետերից միայն 517-ն էր հագեցած անհրաժեշտ բուժպարագաներով (պատգարակներ, բժշկական պայուսակներ, դեղատուփեր)[2]:

Մնացած՝ անհրաժեշտ բուժապրանքներով չհագեցած 1000 բուժկետերի տարածքային բաշխվածությունը հանրապետությունում, ինչպես նաև դրանց պատշաճ հագեցվածության համար անհրաժեշտ միջոցները, ըստ նշված հաշվետվության տվյալների, ներկայացված է աղյուսակ 1-ի միջոցով:

Աղյուսակ 1[3]. *ՀԿԽԸ՝ անհրաժեշտ բուժտեխնիկա և դեղորայք չունեցող բուժկետերի քանակի և հագեցվածության ապահովման համար անհրաժեշտ դրամական միջոցների բաշխումն ըստ բնակավայրերի 1941 թ. հուլիսի դրությամբ*

Բնակավայրը	**Բուժտեխնիկայի և դեղորայքի կարիք ունեցող բուժկետերի թիվը**	**Յուրաքանչյուր բուժկետի պատշաճ հագեցվածությունն ապահովելու համար անհրաժեշտ գումարը (ռուբլի)**	**Ընդամենը (ռուբլի)**
Երևան	303	950	287850
Լենինական	214	950	203300

** Հոդվածը ներկայացվել է 19.03.2020 թ., գրախոսվել՝ 05.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս «Հայաստանի Կարմիր խաչի ընկերության գործունեությունը 1920-1930-ական թվականներին (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», կազմող՝ Ս. Ռ. Ավետիսյան, Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018, 404 էջ:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 131, թթ. 19-22 (ռուսերեն):

[3] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, ըստ արխիվային նյութերի [ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 131, թթ. 19-22 (ռուսերեն)]:

Կիրովական	43	650	27950
Վեդի	15	650	9750
Ղամարլու	48	650	31200
Վաղարշապատ	12	650	7800
Հոկտեմբերյան	24	650	15600
Դուզքենդ	60	650	39000
Թալին	4	650	2600
Ստեփանավան	40	650	26000
Մեղրի	4	650	2600
Ալագյազ	8	950	7600
Արթիկ	21	950	19950
Ղարաբաղ	14	650	9100
Աղին	5	650	3250
Բերիայի շրջան	5	950	4750
Դիլիջան	11	950	10450
Սպիտակ	1	950	950
Միկոյան	34	450	15300
Իջևան	14	450	6300
Ալավերդի	50	450	22500
Նոր Բայազետ	8	450	3600
Շամշադին	8	450	3600
Գորիս	18	450	8100
Բասարգեչար	9	450	4050
Սիսիան	24	450	10800
Կրասնոսելսկ	3	450	1350
			785300

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ շուրջ 1000 բուժկետերի պատշաճ հագեցվածության ապահովման համար անհրաժեշտ ընդհանուր գումարը կազմել է 785.300 ռուբլի[1], որը ՀԿԽԸ կենտրոնական կոմիտեն իր սուղ միջոցներից, բնականաբար, չէր կարող հատկացնել:

Հաշվետվության տվյալներով՝ ՀԿԽԸ կենտրոնական կոմիտեն ի վիճակի էր դեղորայքով համալրել միայն 200 բուժկետ: Որոշ մասը առաջարկվում էր ապահովել ի հաշիվ Պաշտպանության, ավիացիոն և քիմիական շինարարության աջակցության ընկերության (Общество содействия обороне, авиационному и химическому строительству, կրճատ՝ Осоавиахим) գլխավոր մատակարարի հայաստանյան բաժանմունքի միջոցների, իսկ սանիտարական պայուսակների համար անհրաժեշտ մնացած դեղորայքը ստանալ Մոսկվայից: Բուժկետերի հագեցվածության ապահովմանն ուղղված՝ առաջարկվում էր դիմել նաև բոլոր քաղխորհուրդներին և շրջանային խորհուրդներին՝ իրենց բյուջեի սահմաններում միջոցների տրամադրման համար[2]:

Որպես հետագա գործունեության կարևոր ուղղություն՝ նշվում էր նաև բուժկետերի ցանցի ընդլայնումը, մինչդեռ դրանց և քանակական, և որակական առկա վիճակը, ըստ գնահատականների, բոլոր բնակավայրերում էլ չէր համապատասխանում ազգաբնակչության իրական կարիքներին ու պահանջմունքներին:

Հաշվի առնելով ներկայացված խնդիրներն ու դրանց լուծման նպատակով նշվող առաջարկությունները՝ ՀԽՍՀ Ժողկոմխորհի՝ արդեն 1941 թ. հուլիսի 17-ի հրամանագրով նախատեսվում են ՀԿԽԸ բուժկետերի ցանցի ընդլայլման և բուժապրանքներով ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

---

[1] *Նշված տվյալը ստացել ենք սկզբնաղբյուր փաստաթղթում տեղ գտած հաշվարկային վրիպակների վերահաշվարկման և ճշգրտման արդյունքում:*

[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 131, թթ. 19-22 (ռուսերեն):*

1. ՀԽՍՀ Առողջապահության ժողովրդական կոմիսար Ս. Ճշմարիտյանին առաջարկել՝

Ա) եռօրյա ժամկետում բուժքույրերի գործող դասընթացներն ապահովել անհրաժեշտ քանակի մանկավարժական անձնակազմով,

Բ) բժշկական ինստիտուտի բոլոր հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, ստացիոնար հաստատություններում և անատոմիկումում ապահովել պրակտիկայի անցկացման անհրաժեշտ բազա,

Գ) կրթական գործընթացների ղեկավարման համար ՀԿԽԸ կենտրոնական կոմիտեին տրամադրել մեկ բժիշկ,

2. Առևտրի և Թեթև արդյունաբերության ժողկոմներին առաջարկել ՀԿԽԸ կենտրոնական կոմիտեին ապահովել 300 բժկական խալաթների և բուժքույրական գլխանոցների համար անհրաժեշտ կտորեղենով,

3. ՀԽՍԽ երկրագործության ժողկոմին, աշխատավորական դեպուտատների քաղաքային և շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների ներկայացուցիչներին, ձեռնարկությունների և հիմնարկությունների ղեկավարներին առաջարկել՝ բուժկետերի հագեցվածության ապահովման համար տրամադրել համապատասխան գումարներ՝ ըստ կցվող տաբելների,

4. ՀԿԽԸ նախագահ ընկ. Մանթաշյանին և Հայպետհրատի տնօրեն ընկ. Դռնոյանին առաջարկել հրատարակել առաջին բուժօգնության և սանիտարական գործի կազմակերպման վերաբերյալ բրոշյուրներ, համապատասխանաբար՝ 10 հազար և 5 հազար տպաքանակով,

5. ՀԿԽԸ նախագահ ընկ. Մանթաշյանին հանձնարարել՝

Ա) Առողջապահության ժողկոմի և Տեղական հակաօդային պաշտպանության (Местная противовоздушная оборона МВПО) շտաբների հետ համատեղ հնգօրյա ժամկետում մշակել բուժկետերի ցանցի ընդլայնման պլան և անցնել դրա իրագործմանը,

Բ) շտապ միջոցներ ձեռնարկել բուժկետերին անհրաժեշտ դեղորայքի և բուժտեխնիկայի պահուստների համալրման համար,

6. ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ ընկ. Աղբալյանին հանձնարարել ստուգել մասսայական պաշտպանության սանիտարական աշխատանքի հանձնարարության կատարումը ՀԿԽԸ կենտրոնական կոմիտեի կողմից և արդյունքների մասին զեկուցել ՀԽՍՀ Ժողկոմխորհի հերթական նիստի ընթացքում[1]:

ՀԽՍՀ Ժողկոմխորհի՝ հրամանագրով նախատեսված վերոնշյալ հանձնարարականների կատարման վերաբերյալ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Գ. Աղբալյանին ուղղված 1941 թ. օգոստոսի 30-ին թվագրվող զեկույցում մասնավորապես նշվում է, որ ՀԿԽԸ մոբիլիզացիոն պատրաստության վիճակի բարելավմանն ուղղված ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1941 թ. հուլիսի 17-ի հրամանագրով նախատեսված բոլոր կետերի հանձնարարականները կատարվել են, բացառությամբ 3-րդ և 4-րդ կետերի[2]: Բուժկետերի պատշաճ հագեցվածությունն ապահովելու համար Պաշտպանության, ավիացիոն և քիմիական շինարարության աջակցության մատակարարման բաժանմունքի պահեստում բավարար քանակությամբ բուժպարագաներ չլինելու պատճառով հնարավոր է եղել ապահովել դրանց ձեռքբերումն ընդամենը 2014 ռուբլու չափով, իսկ այս նպատակով հավաքագրված գումարի մնացած մասը ՀԿԽԸ կենտրոնական կոմիտեն ստիպված էր վերադարձնել[3]: Իսկ ինչ վերաբերում է առաջին բուժօգնության և սանիտարական գործի կազմակերպման ուղեցույցների հրատարակությանը, ապա գործընթացը հետաձգվել է՝ կապված փոփոխություններով նոր կարգը ներառող ուղեցույցները Մոսկվայից ուշ ստանալու հետ[4]:

Պատերազմի առաջին տարիներից հատկապես կարևորվում էր բանակի՝ համապատասխան բուժասանիտարական կադրերով ապահովվածության խնդիրը, որի լուծման գործում առանցքային էր Կարմիր խաչի ընկերության դերը:

---

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 131, թ. 1 և շրջ. (ռուսերեն):*

[2] *Տե՛ս նույն տեղում, թ. 35 (ռուսերեն):*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1942 թ. հունվարի 20-ի հրամանագրով ՀԿԽԸ հանձնարարվում է իրականացնել Կարմիր բանակի համար բուժսանիտարական կադրերի պատրաստման ինտենսիվ միջոցառումներ[1]: Հատկանշական են հատկապես հրամանագրի վերջին կետերը, որոնցով Կենտկոմի կադրերի վարչությանը հանձնարարվում էր տասնօրյա ժամկետում վերանայել Կարմիր խաչի կենտրոնական կոմիտեի աշխատակազմը և այն վերաձևավորել՝ ներառելով այնպիսի կադրեր, որոնք ի վիճակի կլինեն աշխատել պատերազմի պայմաններում, իսկ Կոմկուսի Երևանի քաղաքային կոմիտեին հանձնարարվում էր անցկացնել Կարմիր խաչի ընկերության պլենում[2]: Այսպիսի հանձնարարականները վկայում են առաջին հերթին Կարմիր Խաչի կենտրոնական կոմիտեի գործունեությունից Կոմկուսի Կենտկոմի դժգոհության մասին, ինչը հատկապես կարող էր պայմանավորված լինել պատերազմական իրավիճակում համապատասխան գործառույթների ոչ բավարար իրականացմամբ:

ՀԿԽԸ կողմից 1942 թ. իրականացված հետագա աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացված էր 1943 թ. մարտի 26-27-ին անցկացված՝ կենտկոմի 6-րդ պլենումի արխիվային փաստաթղթերում[3]: Պլենումի ընթացքում Հայաստանի Կարմիր Խաչի և Կարմիր մահիկի ընկերության կենտրոնական կոմիտեի նախագահ Ա. Խրիմյանի՝ Կարմիր Խաչի կենտկոմի 1942 թ. աշխատանքների արդյունքների մասին զեկուցման տվյալների համաձայն՝ Ընկերության կազմակերպությունների (բուժկետերի) տեղաբաշխումը եղել է այսպիսին (տես գծապատկեր 1).

Գծապատկեր 1[4]. *1942 թ. Կարմիր խաչի կազմակերպությունների (բուժկետերի) բաշխումն՝ ըստ ոլորտների և հիմնարկների*



Արձանագրենք, որ 1941 թ. 1517 բուժկետերի (որոնցից 1000-ը՝ փաստացի չգործող) փոխարեն 1942 թ. գործել է արդեն 1787-ը, ընդ որում, զեկուցման մեջ այլևս չի խոսվում դրանց անբավարար հագեցվածության մասին, ինչից կարող ենք եզրակացնել, որ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 1943 թ. մարտի դրությամբ բուժկետերի հագեցվածության խնդիրը փաստացի կարելի էր համարել լուծված:

Նշենք, որ անհամապատասխանություն կա այս և Վ. Ավագյանի գրքում նշված տվյալների[5] միջև, որտեղ կազմակերպությունների ընդհանուր քանակը նշվում է 1877, արտադրական հիմնարկներում և դպրոցներում գործող կազմակերպությունների թվերը համընկնում են, կոլտնտեսություններում գործող կազմակերպությունների թիվը նշում է 332, այլը՝ 925: Նույն գրքում Հայկական կարմիր խաչի ընկերության անդամների թիվը 1942 թ. նշված է 55336, մինչդեռ ըստ

---

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 22, գ. 46, թ. 74 և շրջ. (ռուսերեն):*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 69 և շրջ.: Պատճեն: Մեքենագիր; նույն տեղում, թթ. 1-21: Պատճեն: Մեքենագիր; ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 54-57 (ռուսերեն); ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 26- 27: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*

[4] *Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ըստ արխիվային նյութի (ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 1- 21: Պատճեն: Մեքենագիր): Ըստ ոլորտային հիմնարկների՝ գործող կազմակերպությունների թվաքանակների գումարը կազմում է 1777, սակայն որպես ընդհանուր թիվ՝ արխիվային փաստաթղթում նշվում է 1787: Կարծում ենք, շեղումը վրիպակի արդյունք է, սակայն քանի որ չենք կարող հստակ նշել, թե որ թվաքանակի մասով է վրիպակը տեղի ունեցել, գծապատկերում պարզապես ներառել ենք շեղումը ընդհանուր թվից:*

[5] *Տե՛ս Ավագյան Վ., Հայկական ՍՍՌ Կարմիր Խաչի ընկերության պատմությունը, Ե., 1949, էջ 72:*

Կարմիր խաչի կենտկոմի նախագահի զեկույցի՝ այդ ժամանակ այն հասել էր 75996-ի՝ սեռային հետևյալ բաշխվածությամբ (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2[1]. *ՀԿԽԸ անդամների սեռային կազմը 1942 թ.*



Ըստ Ա. Խրիմյանի զեկուցման՝ 1942 թ. անդամների վերահաշվարկ է կատարվել, քանի որ բանակ զորակոչվելու հետևանքով նրանց փաստացի քանակը կրճատվել է 18000-ով, փոխարենը՝ ՀԿԽԸ շարքերը համալրել են 13603 նոր անդամներ, որով նրանց ընդհանուր թիվը կազմել է՝ 75996 (հետևաբար՝ 1941 թ. անդամների թիվը եղել է 80690-Ս.Ա.), որը նա գնահատում է որպես անբավարար ցուցանիշ, քանի որ դրա արդյունքում հնարավոր է եղել ապահովել անդամավճարների հավաքագրման պլանի ընդամենը 49%-ը (պլանային 205000 ռուբլու փոխարեն՝ 101900 ռուբլի): Կարմիր խաչի կենտկոմի նախագահն այսպիսի ցուցանիշը համարում է կազմակերպչական և վերահսկողական անբավարար աշխատանքների, ինչպես նաև թույլ քարոզչության, անդամագրքույկների ժամանակին չհրատարակման հետևանք[2]:

Ա. Խրիմյանն իր զեկույցում կարևորում է նաև պատերազմի ընթացքում Կարմիր Խաչի դոնորական աշխատանքները՝ մասնավորապես նշելով. «Ընկերներ, Հայրենական պատերազմի ընթացքում հսկայական դեր ունեն կատարելու մեր դոնորները, որոնք արյան փոխներարկմամբ պետք է օգնեն մեր վիրավոր բանակայինների շուտափույթ բուժմանը, որի քաղաքական ու տնտեսական նշանակությունը այսօր շատ մեծ է: 1942 թ. ընթացքում Կարմիր Խաչը մի շարք գործարաններում /Մետաքսի, Կոնսերվի, Տրամվայի գծի և այլն/ կազմակերպել է հատուկ բժշկական զեկուցումներ դոնորության վերաբերյալ և դոնորներին ուղարկել է փոխներարկման ինստիտուտ: Ընկերներ, 1943 թ. մեզ վրա դրված է խոշոր պարտավորություն՝ որպես թիկունք տոննաներով արյուն հասցնելու ֆրոնտին: Այդ աշխատանքները մենք արդեն նախաձեռնել ենք»[3]:

Հատկանշական է, որ զինվորների շուտափույթ բուժման կարևորությունը ՀԿԽԸ կենտկոմի նախագահը գնահատում է ոչ թե մարդասիրական կամ սոցիալական տեսանկյունից, այլ քաղաքական ու տնտեսական, որը ևս մեկ անգամ վկայում է Ընկերության գործունեության վրա վարչահրամայական աշխատաոճի ու համակարգի մեծ ազդեցության մասին, ինչն առաջին հերթին վերաբերում էր «պլանի կատարմանն» ուղղված ջանքերին: Սանպաշտպանական կադրերի պատրաստման ոլորտում աշխատանքները գնահատվում են հաջողված: Այդ ուղղությամբ որոշ ռայկոմների հաջողվել էր ապահովել պլանի գերակատարում: Զեկույցում Ա. Խրիմյանը նշում է. «1942 թ. դրությամբ ունենք 62 սանդրուժինաներ, որոնք տարվա ընթացքում զգալի աշխատանք են ծավալել Կարմիր Բանակին օգնություն կազմակերպելու գործում: Կարմիր Բանակի շարքերն են մեկնել 596 դրուժիննիկներ: Էվակո հոսպիտալներում աշխատել են 946 դրուժիննիկներ, կործանիչ գումարտակներ են ուղարկվել 24 դրուժիննիկներ, բացի այդ աշխատում են նաև ՀՕՊ-ի պունկտերում և այլ զինվորական մասերում»[4]:

Նույն պլենումի ընթացքում Հայկական ԽՍՀ առողջապահության ժողկոմ Ս. Ճշմարիտյանն իր ելույթում նշում էր. «Հայրենական պատերազմում Կարմիր Խաչի աշխատակիցների դերը

---

[1] *Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ըստ արխիվային նյութի (ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 1-21: Պատճեն: Մեքենագիր):*

[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 1- 21: Պատճեն:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

նույնքան կարևոր է, որքան առողջապահական մարմինների աշխատողներինը»[1]: Միևնույն ժամանակ ճշմարիտյանը կարևոր է համարում անդրադառնալը թե՛ Կարմիր խաչի, թե՛ առողջապահական մարմինների աշխատանքերի կազմակերպման հիմնական խոչընդոտներին, որոնց շարքում նշում է այդ երկու օղակների միջև փոխադարձ կապի բացակայությունը և այն բացասական իրողությունը, որ Կարմիր խաչը, կարծես թե շեղվելով իր բուն գործառույթներից, առավելապես կենտրոնացել է անդամավճարների հավաքագրման վրա: Որպես ամփոփում՝ առողջապահության ժողկոմի խոսքում մասնավորապես ասվում է. «Պետք է նշել, որ Կարմիր Խաչի աշխատողները պատերազմի ընթացքում վատ չեն աշխատել, սակայն, այդուամենայնիվ աշխատանքի վերանայման անհրաժեշտություն կա: Կարմիր Խաչի աշխատանքներում վերափոխումների ժամանակին իրականացման արդյունքում մենք կարող ենք Ընկերության կազմակերպությունների շուրջ ձևավորել լավ և առողջ ակտիվ՝ հասնելով մեր հանրապետության ինչպես սանիտարական, այնպես էլ ընդհանուր բարեկեցության բարելավմանը»[2]:

Հաշվի առնելով պլենումի ընթացքում հնչած գնահատականներն ու քննարկումների արդյունքները՝ ընդունվում է համապատասխան բանաձև[3]՝ նաև արձանագրելով, որ «Հայաստանի Կարմիր Խաչի կազմակերպությունները 1942 թ. ընթացքում սանպաշտպանական զգալի աշխատանքներ են ծավալել Կարմիր Բանակին նորանոր ռեզերվներ՝ բժշկական քույրեր, սանիրահանգիչներ, սանդրուժիներ, սանպոստեր կազմակերպելու և էվակո-հոսպիտալներին հասարակական օգնություն, օժանդակություն կազմակերպելու գործում: Միաժամանակ...աշխատանքի բոլոր ոլորտներում կան թերություններ»[4]:

Որոշում է կայացվում մի շարք ուղղություններով իրականացնել բարեփոխումներին միտված միջոցառումներ, այդ թվում՝ բարելավել կադրերի որակական բնութագրիչները, նոր թափ հաղորդել կազմակերպությունների վերահաշվառման աշխատանքներին, ծավալել լայն քարոզչական աշխատանքներ, սանդրուժիներում ուժեղացնել հրամանատարական կադրերը, բարձրացնել նրանց ուսուցման որակը, թարմացնել ուսուցման ուսումնամեթոդական հենքը և այլն: Միանգամայն անթույլատրելի համարելով, որ քույրական կուրսերի ղեկավարումը հանձնվում է ոչ մասնագետ անձանց՝ պլենումը միաժամանակ հանձնարարում է կենտկոմի գործող ապարատին կանխել այդ երևույթը և քույրական կուրսերն ապահովել բժշկական կադրերով:

Արխիվային փաստաթղթերը ՀԿԽԸ 1943 թ. գործունեության վերաբերյալ խիստ սակավ թվային տվյալներ են պարունակում: Համաձայն Վ. Ավագյանի գրքի՝ ՀԿԽԸ-ն 1943 թ. ևս ընդլայնել է գործունեության շրջանակները՝ անդամների թիվը հասցնելով 105225-ի, իսկ կազմակերպություններինը՝ 2192-ի[5]:

1941-1942 թթ. ընկերության անդամների և կազմակերպությունների թվի վերաբերյալ նշված աղբյուրում և արխիվային փաստաթղթերում առկա են տվյալների որոշակի ոչ սկզբունքային անհամապատասխանություններ: Եթե հիմք ընդունենք գրքում նշված տվյալները, կունենանք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկերներ 3, 4).

Գծապատկեր 3. *ՀԿԽԸ անդամների ընդհանուր թվի շարժը 1941-1945 թթ.*



***** ըստ այլ փաստաթղթի՝ 80690 (տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 1-21):
****** ըստ այլ փաստաթղթի՝ 75996 (տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 1-21):

[1] *Տե՛ս նույն տեղում, թթ. 54-57 (ռուսերեն):*
[2] *Տե՛ս նույն տեղում:*
[3] *Նույն տեղում, թթ. 26- 27: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*
[4] *Տե՛ս նույն տեղում:*
[5] *Տե՛ս Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 73:*

1942 թ. ՀԿԽԸ անդամների թվի նվազումը, ինչպես արդեն նշել ենք, պայմանավորված է եղել բանակ զորակոչվելու հանգամանքով, սակայն հաջորդող տարիներին գրանցվել է շարունակական աճ: Փաստենք, սակայն, որ շատ դեպքերում անդամագրումները կրել են ֆորմալ բնույթ՝ պայմանավորված Կարմիր խաչի կենտկոմի կողմից անդամների թվի և անդամավճարների պլանի կատարման դրդապատճառով:

Անդամների թվի շարժով պայմանավորված՝ նույնպիսի դինամիկա է ունեցել նաև ՀԿԽԸ կազմակերպությունների թիվը:

Գծապատկեր 4. *ՀԿԽԸ կազմակերպությունների (բուժկետերի) թվի շարժը 1941-1945 թթ.*



***** ըստ այլ փաստաթղթի՝ 1787 (տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 28, թթ. 1-21):

Դատելով 1944 թ. գործունեության տարեկան հաշվետվության վերաբերյալ բացատրագրի[1] տվյալներից՝ հաշվետու տարում հիմնական և շրջանառու միջոցների առանձնապես մեծ շարժ չի գրանցվել. Կարմիր Խաչի Ընկերությունը 14842 ռուբլու հիմնական միջոցներ է անհատույց փոխանցել՝ ուղղված Վորոշիլովգրադի և Տագանրոգի մանկատների և պատերազմի հաշմանդամների տների վերանորոգման աշխատանքների իրականացմանը, իսկ Վորոշիլովգրադի Կարմիր խաչի շրջանային կոմիտեին փոխանցվել են 4000 ռուբլու վկայագրեր: Հաշվետու տարում ձեռք բերված հիմնական և շրջանառու միջոցների արժեքը կազմել է 25988 ռուբլի: Անդամավճարների հաշվին հավաքագրված դրամական միջոցների հիմնական մասն ուղղվել է աշխատավարձերի վճարմանը: Հատկանշական է, որ 1944 թ. ՀԿԽԸ հաջողվել է 103.75%-ով կատարել անդամավճարների հավաքագրման պլանը, հավաքագրելով 170880 ռուբլի անդամավճար[2]: Սակայն, միաժամանակ նշվում է, որ չի հաջողվել խուսափել բյուջեի դեֆիցիտից, ինչը պայմանավորված էր ինչպես բուժկադրերի պատրաստման գործում չնախատեսված ծախսերով, այնպես էլ շինությունների պահպանման, վերանորոգման, ջեռուցման, լուսավորության և բժշկական խալաթների լվացման հետ կապված փաստացի ծախսերով, որոնք էականորեն գերազանցել են բյուջեով նախատեսված միջոցները: Մասնավորապես նշվում է, որ հիմնականում շրջանային հիվանդանոցները անհրաժեշտ միջոցները և ծառայությունները երբեք ընկերությանն անհատույց չեն տրամադրել, ինչը պայմանավորել է լրացուցիչ մեծ ծախսեր:

1944 թ. ՀԽՍՀ ժողկոմխորհի որոշմամբ[3] ուժը կորցրած ճանաչվեց 1931 թ. ապրիլի 12-ին հաստատված ՀԿԽԸ կանոնադրությունը և հաստատվեց լրամշակված կանոնադրությունը[4], որտեղ նոր դրույթներով սահմանվում էին ընկերության հիմնական նպատակները, իրավունքներն ու պարտականությունները, կառուցվածքը, գործունեության շրջանակները, ղեկավար կազմը, վերահսկող մարմնի ձևավորման կարգը, միջոցների ներգրավման աղբյուրները և այլն[5]: Մասնավորապես, նոր կանոնադրությամբ սահմանվում էր, որ ՀԿԽԸ միջոցները ձևավորվում են բացառապես ի հաշիվ անդամավճարների ու մուտքավճարների և ԽՍՀՄ Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի միության գործադիր կոմիտեի տրամադրած դոտացիաների: Ընկերության ամբողջ

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 92, թթ. 2-3 (ռուսերեն):*
[2] *Տե՛ս նույն տեղում:*
[3] *Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 17, գ. 567, թ. 2 (ռուսերեն):*
[4] *Տե՛ս նույն տեղում, թթ. 3-10:*
[5] *Տե՛ս նույն տեղում:*

կանխիկ դրամական միջոցները պետք է պահվեին պետական վարկային հաստատություններում, ինչը ենթադրում էր միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողական մեխանիզմների խստացում:

Ընկերության հիմնական նպատակները ձևակերպված էին բացառապես առողջապահական բնույթի միջոցառումների կազմակերպման և իրականացման շրջանակում, ինչը վերստին հաստատում էր դեռ 30-ականներից որդեգրած գործունեության այն ուղենիշը, որով ՀԿԽԸ բարեգործական առաքելությունը փոխարինվում էր բնակչության շրջանում առողջապահական խնդիրների լուծման գործառույթներով: Այս մասին է վկայում նաև ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով հանգանակությունների կազմակերպման բացառումը: 1940-ական թթ. կեսերին ՀԿԽԸ-ի գործունեությունը ներառում էր հաստատություններում (ձեռնարկություններ, կոլտնտեսություններ, ուսումնական հաստատություններ) սանիտարական պոստերի և դրուժինաների ցանցի ձևավորումը, սանպաշտպանության կադրերի պատրաստումը, բնակչության շրջանում սանպաշտպանության և բուժօգնության առաջին օգնության տրամադրման դասընթացների իրականացումը, համապատասխան գրականության հրատարակումն ու տարածումը, հաստատություններում ինֆեկցիոն հիվանդությունների և տրավմաների կանխարգելման, ինչպես նաև արյան փոխներարկման համար դոնորների ներգրավման գործում առողջապահական մարմիններին աջակցություն ցուցաբերելը և կանոնադրությամբ հաստատված առողջապահական բնույթի այլ՝ միջոցառումների իրականացումը:

Այսպիսով, Հայաստանի Կարմիր խաչի ընկերությունը 1940-ական թթ. առաջին կեսին ծավալել է լայն գործունեություն՝ բազմաբնույթ օգնություն տրամադրելով բնակչությանը, հիմնարկություններին և բանակին՝ բժշկական, սանիտարահիգիենիկ և կանխարգելիչ գործողությունների միջոցով պատերազմի տարիներին աջակցելով առաջնագծում և թիկունքում սանպաշտպանական և բժշկական աշխատանքների արդյունավետ և պատշաճ կատարմանը:

Сурен Аветисян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ. В статье освещается деятельность Общества Красного Креста Армении в первой половине 1940-х годов. Во время Великой Отечественной войны Общество Красного Креста Армении провело множество медицинских и санитарных мероприятий, направленных на защиту здоровья и лечение населения и красноармейцев как на территории Армении, так и на фронте.

Несмотря на многочисленные проблемы и препятствия, Общество Красного Креста Армении сумело организовать деятельность, оказавшую огромное влияние на улучшение медицинского обслуживания в годы войны.

Ключевые слова*: Общество Красного Креста Армении, Великая Отечественная война, медицинская и санитарная помощь, Красная армия, здравоохранение, гуманитарная помощь, медпункт.*

Suren Avetisyan, THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR. The article highlights the activities of the Red Cross Society of Armenia in the first half of the 1940s. During the Great Patriotic War, the Red Cross Society of Armenia held many medical and sanitary measures aimed at protecting the health and treatment of the population and army, both on the territory of Armenia and at the front.

Despite numerous problems and obstacles, the Red Cross Society of Armenia managed to organize activities that had a huge impact on improving medical care during the war years.

Key words: *Red Cross Society of Armenia, The Great Patriotic War, medical and sanitary assistance, Red Army, healthcare system, humanitarian aid, first-aid post.*